

բայց դաւանութեան կողմէն շատ չ'են տարբերիր : Մարութ կեանք ու վարք ունին , և շատ աշխատասէր են , որով և այժմ անկարօտ կ'ապրին : Աւետարանն բառական կերպիւ կ'ընդունին , ամենեւին մեկնութիւն չ'են տար . եօթն խորհուրդներն բոլորովին հոգեւոր իմաստով կ'ըմբռնեն , առանց երբէք նիւթական և տեսանելի արարողութեան : Իւրաքանչիւր որ քահանայ կը համարուի և քահանայութիւն ուրիշ բան չ'է , եթէ ոչ , Ս . Գիրք կարգալ ժողովրդեան առջեւ : Իւրաքանչիւր ընտրուած քահանայ այն պաշտօնն կը վարէ մի կամ երկու տարի , և ապա այլք իրեն կը յաջորդեն :

Գուխարօրներու հաւատոյ վարդապետութեանց մէջ շատ նմանութիւններ կան նախնի հերձուածոյ , Երրորդութիւնն կ'ընդունին , բայց ըզհայր կը համարին լոյս , զՈրդին՝ կեանք , իսկ զՀօգին Սուրբ՝ խաղաղութիւն : Հայրն կը յայտնուի մարդոյն յիշողութեան միջոցաւ , Որդին՝ իմացականութեան , իսկ Հոգին Սուրբ՝ կամաց : Կը հաւատան հոգեւոյ յառաջագոյն գոյութեանն և մարդոյ անկմանն և այնպէս կ'ընդունին , որ հոգին դրուած է մարմնոյ մէջ իւր մեղքն քաւելու համար : Հետեւապէս , երբ Ագամ երեւցաւ երկրի վերայ , չիտթ յիշողութիւն ունէր վերին աշխարհի . միտքն խաւարած էր և կամքն՝ ապրտամբ : Նա չը կարողացաւ փորձութեան դիմադրել և նորէն մեղանշեց , նորա մեղքն իւր սերունդին չ'անցնիր : Հոգին հակամիտ է չարութեւ և սորա պատճառն է մարդոյ առաջին անկումն : Աշխարհաբաւութեան և մաքրութեան տեղն է , ուր մարդն աղատութիւն բարի գործելով պէտք է թողութիւն ստանայ իւր այն հին մեղաց , որով իւր անձն աւելի սիրեց . բան զԱստուած :

Յիսուս Քրիստոս , որ Որդի Աստուծոյ է և Աստուած , մարմնացաւ , որ մարդուն առաջնորդէ և օգնէ այն վարձութեան և քաւութեան մէջ : Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւններն պարունակուած են Ս . Գրոց մէջ , բայց այնպէս խորհրդաւոր են , որ միայն Գուխարօրներուն տրուած է հասկանալ , իսկ նորածեւ Ռուսներն զուրկ են այս շնորհքէն : Այս է ահա Գուխարօրներու դաւանութիւնն :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Հունգարիոյ Պ' շտ քաղաքէն Հայազգի տիկին մի ուխտաւորութեան եկաւ 'ի Ս . Լըռուսոյէմ' իւր 18 աւեայ զաւակին հետ միասին : Ըյս առաջին անգամն է որ Հունգարացի ազգայինքէն ուխտաւոր կ'ունենայ Ս . Լ'թռուս : Յիշեալ Հայազգի Տիկինն մաքուր Հայերէն կը խօսի եւ սրտաշարժ տեղեկութիւններ կը պատմէ մեր Հունգարացի ազգայնոց վերայ , այնպիսի տեղեկութիւններ , որոնք միտթարական են և տրտմական : Սիտիթարական , որովհետեւ Հայութիւնն տակաւին կը պահպանուի յիշեալ երկրին մէջ , տրտմական՝ որովհետեւ բնաւ տեղեկութիւն չունին մեր Կաթողիկոսական և Պատրիարքական Լ'թռուց վերայ , մեր Ռուսաստանի , Տաճկաստանի , Պարսկաստանի և Հնդկաստանի ազգայնոց վերայ , մեր աղբային Վարչութեան վերայ ,

Ձեր ազգային դպրութեան և բազմութեան վերայ և այլն և այլն :

Նախնի դարուց արհաւիրացի գէպքերու պատճառաւ ազգային յարաբերութիւններն իսպառ դադրելով՝ այսպէս երկու կողմէն եւս անձանօթ մնացած են ինչպէս Հոսեփայի Հայք մեզ, նոյնպէս և մեք Հունգարիայ Հայոց :

Ներկայ դարս յարաբերութեան և հաղորդակցութեան դար է, երկրի մի ծայրի բնակիչք միւս ծայրի հետ դիւրութեամբ կը հաղորդակցին : Դամանակ է, որ մեք եւս թմրութենէ շարժինք և գէթ Ձեր տրենակիցներու հետ հաղորդութիւն ունենամք, իրարու ցաւ և ուրախութիւն հասկնանք, զիրար որոնենք և մեր ազգայնութեան ցրուած տարերքն սիրով շաղախենք և միացնելով ազգային ամբողջութիւն կազմենք :

— Ներկայ ամսոյս մէջքանի մի օր շարունակ ձիւն եկաւ և Պաղեստինն հիւսիսային ձմրան սուսանով ծածկեցաւ : Այս երկրորդ տարին է, որ սուրբականէն արտաքոյ Պաղեստին եւս ձիւնապատ երկիրներու գոյն կը դգենու, միայն այս տարբերութեամբ, որ սակաւ աւուրց մէջ իսկոյն կը մերկանայ իւր թանձր զգեստն : Օտրուներ կը պատմեն թէ՛ հազիւ ուրէք տեսած են ի Պաղեստին այնպիսի ձիւն, ինչպէս կը տեսնեն վերջին երկու տարիներուս մէջ :

— Վստիք մի աւուր մէջ երկունջեցեալներ ունենալով, թերեւս այլոց դրդմամբ, կամեցան թաղման ժամանակ դեր մի խաղալ մեր գերեզմանատան մէջ, և այն տեղ թաղել, ուր ինքեանք կամին : Յուդարկաւութիւնն սովորականէ դուրս մեծ բազմութեամբ էր և անշուշտ նպատակ ունէին խռովութիւն յարուցա-

նել և բռնի իրենց տպօրինի կամքն յառաջ վարել : Ա՛ր ուխտաւորաց ազգային անձնատիրութիւնն գրգռուելով՝ գերեզմանատուն դիմեցին, սակայն սատտիկ պատուիրուեցաւ իրենց, որ ամենեւին խռովութեան առիթ չտան : Երեջիսն լուր տրուեցաւ, և իսկոյն զօրքեր եկին : Վստիք տեսնելով, որ իրենց պատրաստած ամեն գաղտնի հնարքներն ի դերեւ ելան, ստիպուեցան Ս. Աթոռոյս կողմէն իրենց ցոյց տրուած տեղն թաղել նրնջեցեալներն, և այսպէս խռովութեաւ առաջն առնուեցաւ խռովութեան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ս. Աթոռոյս Տպարանէն ի լոյս ընծայեցաւ փոքրադիր ժամագիրք, մաքուր թղթի վերայ եւ վայելուչ տպագրութեամբ : Պարունակութիւնն ամբողջ է, իսկ գիրքն փոքր, այն նըպատակաւ, որ գիւրին լինի ունենալ նաև ի ճանապարհորդութեան, իբրև ընտիր աղթագիրք, որ անհրաժէշտ կարելոր է ամեն Հայու համար :

Գինն է երեք կիլոֆանց, հասարակ կաղնով, և կը ծախուի թէ՛ ի Ս. Աթոռոս և թէ՛ Պօլսոյ Փոխանորդարանին մէջ :